

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ՊԱՏՈՒԱՍՏ. Կոխի նախկին աշակերտ և Բեյքիգի սանատորիայի տեսուչ պրոֆեսոր Մելլերը, որ երկար տարիներ զբաղուած էր տուբերկուլիօզով, հաստատում է, որ կարելի է բժշկել այդ ախտանքի հիւանդութիւնը, սառնարիւն կենդանիների տուբերկուլիօզի մանրէները (Mycrobes) պատուաստելով մարդուն. երկու ամսուայ ընթացքում նա պատուաստել էր իր երակում 4 անգամ, սկսելով 1901 թուի մարտի մէկից, օձի տուբերկուլիօզից դոյացած շիճուկով, իսկ նոյն տարուայ դեկտեմբերին, նա պատուաստեց իրեն մարդու տուբերկուլիօզի կիթը (Mycobacteria) և չվարակուեց:

Այս փորձը in animi nobili, որով գիտուն մանրէաբանը ուզում էր բացատրել իւր տեսութիւնը, իր վերայ փորձեր կատարելով, անյայտ մնաց ժողովրդից. միայն այժմ այդ փորձերի հետեանքները յայտնուեցին ժողովրդին, ինչպէս երևում է քաջ գիտնականը. պատուաստումից երկու ամիս յետոյ լղարեց և 15 ֆունտ պակասել էր նորա մարմնից. բայց առհասարակ իրան շատ լաւ է զգում: Ներկայումս նա կրկին ձեռք բերեց այդ 15 ֆ. և բոլորովին առողջ է և բոլորովին ազատ է համարում իրան ամեն վտանգների: Բերինգի փորձերը եղների վրայ ամենին յայտնի է. նա գործադրում էր Պաստէրի միջոցը. Մելլերը առաջինը ուզեց հաստատել բոլորովին հակառակը, գործադրելով մարդու պատուաստելու համար ստորին գործարանաւորների տուբերկուլիօզի մանրէները. դորա համար նա վերցրեց անթոյն օձերի բազմատեսակ ցեղեր. արդէն 1895 թուին բժիշկ Նիւբարը ուշադրութիւն դարձրեց աւագանների մէջ ապրող մի քանի ձկների բացիւնների վրայ. նրանից յետոյ շատ գիտնականներ զննել են սառնարիւն կենդանիների տուբերկուլիօզը. օրինակ գորտերի, կրէայի, օձերի չարք էր առաջանում, որ նախ պէտք էր որ այդ մանրէն պատուաստել նոյն ցեղի ուրիշ կենդանուն և յետոյ միայն շիճուկ պատրաստել մարդու համար: Այդ մտքով երկու փորձ արդէն կատարուել է: Բժիշկ Ֆրիդմանը գործադրում էր կրէայի մանրէները, իսկ Մելլերը պատուաստեց իրան օձի հեղուկով: Եթէ այդ փորձերը կը կրկնուին և յաջող հետեանք

կւենենան, այն ժամանակ մօտակայում կարելի կլինի մարմինը առաքելիկութեօգի վարակումից անընդունակ դարձնել:

ԱՆՔՆՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ. Բժիշկ Ռիչարդսոնը անքնութիւնը բժշկելիս զանազան քնեցնող միջոցների փոխարէն առաւելութիւն է տալիս ֆիզիքական և մեքենական միջոցներին: Անհրաժեշտ է ննջարանի օդը մաքրել. աւելի լաւ կլինի մի պատուհան ամբողջ գիշեր բաց թողնել: Սենեակի տաքութիւնը պէտք է լինի 16 աստիճան: Արեան շրջանառութիւնը ուժեղացնելու համար հարկաւոր է մարմինը տաք պահել. մի քանի դէպքերում մեծ ծառայութիւն են անում տաք փաթեթը փորի վրայ. և տաք շիշերը ոտների մօտ. գլուխը և վիզը պէտք է բաց մնան մարմնի բովանդակ զգայութիւնը թուլացնելու համար: լոյսը, ուժեղացնելով ներքին գրգռումը և աւելացնելով տուրքաւոր հէնց այդ բանով գիտակցութեան յուզմունք է առաջացնում, որ և խանգարում է քունը: Խորհուրդ են տալիս հեռու մնալ մտաւոր զբաղմունքից գոնէ 1—2 ժամ քնելուց առաջ. ընթրել կարելի է քնելուց 4 ժամ առաջ, իսկ քնելու ժամանակ օգտակար է մի բաժակ տաք կաթ պաքսիմատով. շատ լաւ կլինի քնելու ժամանակ ընդունել վաննա 10—20 րոպէ, 29—30° տաքութեան. դժուար դէպքերում առաջարկում են ցամաք կամ թաց փաթեթ, գլխի վրայ Լէյտերեան զովացուցիչ: Այնպիսի հիւտնդութեան ժամանակ, երբ խանգարւում է արեան շրջանառութիւնը, օգտակար է դեղերին դիմել. ինչպէս, նեարդաթուրութեան ժամանակ, նոյնպէս և արեան պակասութեան յաճախ քիչ քանակութեամբ դիզիտալիս կարող է առաջացնել բնական և հանդիստ քուն. արեան սաստիկ ճնշման ժամանակ ընդհակառակը աւելի օգտակար կլինի Schott-ի վաննաներ, քիչ քանակութեամբ բրոմի քլոր կամ ինտրոզիլիցերին. և միայն այն ժամանակ, երբ, բնական ջնի համար անօգուտ են լինում բոլոր վերոյիշեալ միջոցները, կարելի կլինի գիմել քնացնող միջոցներին:

ՆԱՐԿԱԹՈՒԼՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ. Դեղատան խառնուրդները և առհասարակ լատինական խոհանոցի բոլոր դեղօրայքը շատ քիչ են օգնում նեարդաթուրութեան: Նեարդաթուրութեան բժշկութեան ժամանակ ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել այսպէս կոչուած հոգեկան բուժման այդ տեսակ հիւանդներին ոչ թէ պէտք չէ ծաղրել, այլ և հարկաւոր է կարեկցութիւն ցոյց տալ, և հաւատարմութիւն, ինչպէս ասում է «Вѣдьте вѣдо́ровѣ» լրագիրը, նրանց հետ պէտք է վարուել ինչպէս իսկական հիւանդների հետ. ինքնըստինքեան հասկացում է, որ նման բժշկութիւնը կարող է ազդել հիւանդի վրայ միայն այն ժամանակ, եթէ յանձնուած է փորձաւոր բժշկի. հարկաւոր է նմանապէս ուշադրութիւն դարձնել հիւանդի կեանքի ընթացքի վրայ. եթէ վերջինս յոգնել է մտաւոր զբաղմունքից, կամ խանգարուած է զանազան յուզ-

մուկներին, աշխատում են տալ նրան կատարելապես հանգստութիւն և խաղաղ կեանք. ընդհակառակը, եթէ հիւանդը նեղանում է անգործութիւնից և միամաղձոտութեան մէջ է ընկնում, աշխատում են դնել ուղիղ և կանոնաւոր գործի, միևնոյն ժամանակ հետեւելով և պահպանելով նրան ոչ միայն շարաշար աշխատելուց, այլ և յոգնելուց: Պէտք է հոգալ ընդհանուր կազմուածքի զարգացման և կեանքի ընթացքի մասին: Այս դէպքում ի հարկէ անկարելի է պահպանել միայն ընդհանուր ձեւը. այլ հարկաւոր է ամեն մի առանձին դէպքում յարմարուել հիւանդի յատկութիւններին և բնաւորութեան: Առհասարակ պէտք է հոգալ, որ հիւանդը կանոնաւոր կեանք վարէ, մաքուր օդ ծծէ, կանոնաւոր զբօսանքներ կատարէ, լաւ կերակրուի, լաւ քնէ և չը ծխէ ու թունդ խմիչքներ չը խմէ: Միևնոյն ժամանակ, մեծ մասամբ անհրաժեշտ է լինում բժշկութիւն էլէքտրականութեամբ, ջրաբուժութեամբ և մասսաժով:

Ինչ վերաբերում է ներքին միջոցների, նոցա վերայ շատ քիչ կարելի է յուսալ:

ԲԱԳՂԻՆ ԻԺՇԵՈՒԹԵԱՆ ՄԷՋ. Վեննայի հասարակական հիւանդանոցում հետաքրքիր փորձեր են կատարուել հիւանդներից բաղկով բժշկելու համար:

Բաղին գործադրուել էր զանազան կաշուային հիւանդութեան բժշկման ժամանակ, գլխաւորապէս լուպուսի, կաշուի վերայի խլրդի, դէմքից մազերը հեւտցնելու, առհասարակ այն բոլոր դէպքերին, երբ առաջ գործադրւում էին Ռէնտգէնեան ճառագայթները:

Առաջին դէպքերին, այդ շատ թանգ մետաղի մի քանի միլիգրամը, մանր հատիկների ձևով դնում էին ստուարաթղթեայ և պարաֆինի թղթից չինած կապսիւլի մէջ, որը յետոյ դնում էին հիւանդ կաշուի վրայ:

Ներկայումս սկսել են բաղին փոշի դարձնել, խառնել լաքի հետ և զետեղել այդ խառնուրդը բարակ շերտով ձգալէժի 2 բարակ թերթերի մէջ, այդ գործիքը կնիքի է նմանում:

Եթէ այդ գործիքը 3—4 բոպէշապի դնենք հիւանդ տեղի վրայ, փոփոխութիւնը իսկոյն տեղի չէ ունենում: Այլ մօտաւորապէս 20 ժամ անցնելուց յետոյ կաշուի այդ մասը ստանում է գունատ-կարմիր գոյն: Եթէ բաղիի ճառագայթներով լուսաւորելը շարունակւում է 4—5 րոպէ, 2—3 շաբաթ անցնելուց յետոյ մօրմնի այդ մասից թափւում են մազերը:

Եթէ բաղիի ճառագայթների գործադրութիւնը տեւէ 10—15 րոպէ, 2—3 շաբաթից յետոյ երևում է կաշուի սաստիկ բորբոքում, գոյանում են բշտիկներ, իսկ բաղիի աւելի խիստ ներգործութիւնից, 3 կամ 4 շաբաթից յետոյ առաջանում են ուռուցքներ, որոնք ծածկւում են սպիներով:

Բաղիի ճառագայթների ներգործութեան տևողութիւնը որոշելու համար Վեննայի հասարակական հիւանդանոցում առանձին ստուգիչ ժամացոյց է ընդունուած, որ զանգահարելով

Նշան է ապրիս ճառագայթների գործողութիւնը դադարացնելու հասկանալի է որ վերոյիշեալ գործիքը կարելի է գործադրել միայն խորթ մակերևոյթի համար: Քթի, կոկորդի, բերանի համար ուրիշ գործիք է շինուած, նա բաղկացած է եղջերախիժեայ (рытцперыа) սուր կապսիւլից, որ ծածկուած է ռադիի և լաքի խառնուրդից. այդ գործիքը ունի ամուր կամ փափուկ կոթ, նայած կարևորութեան:

Հետաքրքրական է, որ այն հիւանդները, որոնք ենթարկուել են ռադիի ճառագայթների ազդեցութեան, միաձայն ասում են, որ ռադիի ազդեցութիւնը ոչ մի զգացողութիւն չէ առաջացնում և բացի կսկծոցից ոչ մի ցաւ չէ պատճառում:

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ